ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

<<19>> դեկտեմբերի 2014թ. N 239

ք. Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՆԵՐՄԱՐԶԱՅԻՆ ԱՎՏՈԲՈՒՍԱՅԻՆ (ՄԻԿՐՈԱՎՏՈԲՈՒՍԱՅԻՆ) ԵՐԹՈՒՂԻՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՈՒՄԸ ՄՐՑՈՒՅԹԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՈՎ ՀԱՂԹՈՂ ՃԱՆԱՉՎԱԾ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տրանսպորտի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի օգոստոսի 16-ի N 762 որոշմամբ հաստատված կարգի 2-րդ, 50-րդ կետերով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի ներմարզային կանոնավոր երթուղիների կազմակերպման և անցկացման մրցութային հանձնաժողովի 2014 թվականի դեկտեմբերի 8-ի թիվ 2 արձանագրությունը և մրցութային ամփոփ թերթիկը.

որոշում եմ՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի ներմարզային ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով փոխադրումներն իրականացնող կազմակերպությունների ընտրության մրցութային հանձնաժողովի կողմից 2014 թվականի դեկտեմբերի 8-ին անցկացված մրցույթի վերաբերյալ արձանագրությունը:
2. Թույլատրել <<Ճամփորդ>> սահմանափակ պատասխանատվության ընկերությանը սպասարկելու <<Արմավիր-Լեռնագոգ>> ավտոբուսային երթուղին 4 (չորս) տարի ժամկետով:
3. <<Արմավիր-Մեծամոր>> միկրոավտոբուսային երթուղու ապասարկումը, մինչև նոր մրցույթի կայացումը ժամանակավորապես վերապահել <<Էջմիածնի Բուատ>> բաց բաժնետիրական ընկերությանը:
4. <<Վաղարշապատ-Տարոնիկ>, <<Վաղարշապատ-Այգեշատ>, <<Վաղարշապատ-Արևաշատ>, <<Արմավիր-Բագարան>>, ավտոբուսային և <<Արմավիր-Բագարան>, <<Արմավիր-Մեծամոր>, <<Արմավիր-Շենիկ>, <<Վաղարշապատ-Տարոնիկ> միկրոավտոբուսային երթուղիների մրցույթը համարել չկայացած, մրցույթին հայտ չլինելու պատճառով:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2014 թվականի դեկտեմբերի 29-ից:

ՄԱՐԶՊԵՏ՝ **Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ**